ՏԵՂԵԿԱՆՔ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԼԵՀԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ԱՌԱՆՑ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ԲՆԱԿՎՈՂ ԱՆՁԱՆՑ ՀԵՏԸՆԴՈՒՆՄԱՆ (ՌԵԱԴՄԻՍԻԱՅԻ) ՄԱՍԻՆ» 2013 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 19-ԻՆ ԲՐՅՈՒՍԵԼՈՒՄ ԿՆՔՎԱԾ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԿԻՐԱՐԿՄԱՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՈՒԺԻ ՄԵՋ ՄՏՆԵԼՈՒ ԿԱՐԳԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

Հայաստանի Հանրապետության Կառավարության և Լեհաստանի Հանրապետության Կառավարության միջև «Հայաստանի Հանրապետության և Եվրոպական Միության միջև առանց թույլտվության բնակվող անձանց հետընդունման (ռեադմիսիայի) մասին» 2013 թվականի ապրիլի 19-ին Բրյուսելում կնքված համաձայնագրի կիրարկման արձանագրությունն ստորագրվել է 2021թ. հոկտեմբերի 29-ին, Լեհաստանի Հանրապետությունում Հայաստանի Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան Սամվել Մկրտչյանի կողմից:

Արձանագրութան 14-րդ հոդվածի համաձայն Կողմերը դիվանագիտական ուղիներով միմյանց գրավոր տեղեկացնում են սույն Կիրարկող Արձանագրության ուժի մեջ մտնելու համար պահանջվող բոլոր ներքին իրավական ընթացակարգերի կատարման մասին: Լեհական կողմը տեղեկացնում է Եվրոպական հանձնաժողովին Կողմերի կողմից բոլոր ներքին իրավական ընթացակարգերի կատարման մասին և այդ մասին տեղյակ է պահում Հայկական կողմին: Կիրարկող Արձանագրությունն ուժի մեջ է մտնում այն օրվան հաջորդող երեսուներորդ օրը, երբ Հայկական կողմն ստանում է ծանուցում Համաձայնագրի 20(2) հոդվածի համաձայն Հետընդունման հարցերով համատեղ Կոմիտեի ծանուցված լինելու մասին:

2021թ. դեկտեմբերի 20-ի դրությամբ՝ լեհական կողմից չի ստացվել ծանուցում՝ Արձանագրության ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ ընթացակարգերի կատարման մասին:

**ՀՀ արտաքին գործերի**
**նախարարի տեղակալ**

Recoverable Signature

X 

ՊԱՐՈՒՅՐ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Signed by: HOVHANNISYAN PARUYR 1512730076 **Պարույր Հովհաննիսյան**